

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝

ԱՅՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ՝ ՆԱԽԵՆԱՅ ՌԱՄԿՕՐԷՆԻ  
ՎԵՐԱՅ, Հ. Ղևոնդ վ. Յով-  
նանեանի. Վիեննա, 1897.

Այս նշանաւոր հետազոտութիւնները մաս առ  
մաս տպագրուել են «Հանդ. ամս.»-ի մէջ, իսկ այժմ  
աւելի ճոխացուցած առանձին գրքուկով լոյս են  
տեսնում Առ այժմ տպագրուել է Ա. մասը, Բ.  
մասն էլ քիչ ժամանակից յետոյ լոյս կը տեսնէ:  
Տպագրութեան մեծ մասը ինքը հեղինակն է հոգացել  
է բայց տարաբարտարար անժամանակ վախճանե-  
լով՝ ամբողջի տպագրութիւնը չի վերջացրել: Ար-  
ժանաւոր հանգուցեալի մահը մեծ կորուստ է մեր  
գրականութեան համար: Ավ որ սիրելի և գնահատել  
է Հ. Ալիշանի և Հ. Այսնեանի գործերը և նոցա  
ուղղութիւնը, ոչ նուազ բերկրութեամբ կը կարգայ  
վերջիչեալ հետազոտութիւնները, ուր որ շնչում  
է նոցա ոգին: սա մի ապացոյց է, թէ նոքա ստեղ-  
ել են մի դպրոց և հմուտ գործակիցներ: Աչ գրքի  
վերնագիրը և ոչ նորա ցանկը գաղափար կարող են  
տալ նորա ճոխ խրատական և ծայրէ ի ծայր հետա-  
քերական քննադակութեան մասին: Եւ քանի որ Բ.  
մասը տակաւին լոյս չէ տեսել և դժուար է գուշակել,  
թէ ամբողջ գործն ինչ գահարներն է քննադակում  
այս համառօտ մատենախօսութեամբ կարող ենք  
ընթերցողին միայն յանձնարարել, որ ինքն անձամբ  
կարգայ գիրքը: Այստեղ նախ կենդանացած կը գտնենք  
մի բարբառ, որ մենք միշտ արհամարհանք համարել  
ներ ուսմի, գուհիկ բարբառ (МУЖИЦКІЙ ГОВОРЪ),  
ինչքան որ այն մինչ այսօր ծանօթ է եղել հասու-  
կոտներին: բայց որ իսկ և իսկ մի հարուստ, ձիուն,  
լաւ զարգացած և ընտիր ժողովրդական լեզու է:  
Գրքի վերնագրից ընթերցողն իրաւամբ ակնկալում  
է այն լեզուի քերականութիւնը, բառերի միջերբը,  
ամբողջ գանձարանը, շունչն ու ոգին՝ մէկ մէկ լու-  
սարանած, մանաւանդ, որ ինքը հեղինակն էլ յա-  
նուանէ ասում է. «արդեօք լաւագոյն չէ՞, ի դար-  
ման աղքատութեան ձեռք և ասացուածոց այժմու  
բարբառոյս, փոխանակ օտար և մուրացած գրերու  
գիմելու՝ հանել առնուլ մեր սեպհական յորդա-  
բուխ ակնադրերէն, որ այնպէս ձեւաշատ է»: Իսկ  
գիրքը առ այժմ լայն տեսարաններ է բաց անում  
մեր առաջ, բայց դեռ ևս մեզ չյարգեցուցած իւր  
ցոյց տուած կատարելութիւններով՝ շուտով մէկը  
փակում է, միւսը բանալու համար. և քանի որ  
Բ. մասը չենք տեսել, մեր առջև առ այժմ ունինք  
մի համատեսիլ պատկեր, մի պանորամա: Ապա  
դուք կը գտնէք մի ընտիր մատենագրութիւն, որ  
մենք չենք երազել, թէ մեր ազգը միջին գարե-  
րում ունեցել է. երեւի երբ որ Հերկուլանում  
բաղաբը Վեղուվի մոխրի տակից բացուեցաւ՝ այն  
տպագրութիւնը գործեց ժամանակակիցների վերայ,

ինչ տպագրութիւն որ գործում է այդ մատենա-  
գրութիւնը ընթերցողի վերայ, էլ չենք ասում: Թէ  
գրքի մէջ քանի քանի անգամ կողմնական նիւթե-  
րի վերայ խօսք է լինում, որոնցից իւրաքանչիւրը  
մի գեղեցիկ ամբողջացած լեզուաբանական, գը-  
րագիտական, պատմական, գիտնական հետազոտու-  
թիւն է: Վերջապէս չենք կարող անյիշատակ  
թողնել հեղինակի համեստութիւնը դէպի իւր ան-  
ձը, յարգանքը և արդարութիւնը դէպի միւս աշխա-  
տաւորները, և անհուն սէրը և հաւատարմութիւնը  
դէպի իւր գործը:

Ս. Ս.

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲՆԱԶԴՆ ՈՒ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆԸ.—  
կազմեցին Ա. Զիլինկարեան և Տ.  
Ռաշմաձեան. Աղէքսանդրապոլ.  
1897. Եր. II + 52. գինն է 8 կոպ.

Այս գրքոյկը առաջինն է այն մի շարք բընա-  
գիտական զրոյցներից, որ պ. պ. Զիլինկարեանն ու  
Ռաշմաձեանը խոստանում են հետզհետէ հրատարա-  
կել ժողովրդի ընթերցանութեան համար: Եթէ յա-  
ջորդ տետրակներն էլ այնպէս յաջող կազմուած լի-  
նին, ինչպէս այս առաջինը, մեզ կը մնայ միայն շը-  
նորհաւորել մի օգտակար և համակրելի ձեռնարկ-  
ութիւն. մենք այնքան քիչ բան ունինք հրատարա-  
կած ժողովրդի համար և մանաւանդ այնքան սակա-  
ւածութիւ են փոքր ի շատէ շնորհալի գրուածքները,  
որոնց նպատակն է հանրամտաչելի ընթերցանու-  
թեան նիւթ մատակարարել, որ չենք կարող չուրա-  
խանալ այսպիսի մի յաջող սկզբնաւորութեան վրայ:  
Այս գրքոյկը հետաքրքրութեամբ կարդացուում է  
և գրուած է շատ պարզ և ընդհանրապէս մաքուր  
ու կանոնաւոր լեզուով: բարբաղդաբար շատ քիչ  
են պատահում այստեղ այն խորթ ձեւերն ու դար-  
ձուածները, որ այնքան սովորական են մեր այդ կար-  
գի հրատարակութեանց մէջ: Գրքոյկի գինն աժան է,  
որ մեզանում գրքի տարածման հարկաւոր պայման-  
ներից մէկն է: Մի բան, որ ցանկալի է տեսնել, յա-  
ջորդ տետրակներն են, որոնց շնորհիւ մասնաւորա-  
պէս բնագիտական զրոյցներն աւելի հետաքրքրական  
ու օգտակար են դառնում՝ մանաւանդ հասարակ  
ժողովրդի համար:

Յաջորդ գրքոյկները պիտի լինին՝ «ընտանի  
կենդանիներ», «Ոյժեր», «Ելեքտրականութիւն» և  
և այլն:

